ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բայածանցների ուսուցման դժվարություններն ու մեթոդները

Հետազոտող ուսուցիչ՝ Արփինե Մարգարյան

Ղազարավանի միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……3

1.1 «Խմբավորում» մեթոդական հնար…….....…...4

1.2 Ածանցավոր բայերի ուսուցումը *հակադրության* եղանակով……5

Ամփոփումը «Կարկանդակ» մեթոդով……10

Եզրակացություն……11

Գրականության ցանկ ……12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք ուսուցման պրոցեսը պետք է կատարվի սեղմ ժամանակում, սակայն այն պահանջում է գիտելիքների յուրացման հնարավորինս բարձր մակարդակ,կարողությունների և հմտությունների ճշգրիտ ձևավորում:

«Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին: Պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ՝ բարձրանալ: Միայն դաստիարակության արդյունքն է, որ շատերը, որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր»:

Կոմիտաս Վարդապետ, Կ. Պոլիս, 1912թ

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը՝ առաջնորդվել եմ խնդիրները ներկայացնել՝ դասավանդման փորձից ելնելով:

Սովորողների հետ աշխատանքն առավել արդյունավետ է, երբ ձևավորվում է հմտությունների այնպիսի համակարգ,որով նրանք կարողանում են ինքնուրույն ձևակերպումներ անել,դուրս բերել այնպիսի օրինակներ,որոնք նպաստում են, որ սեփական ձևակերպումները դառնան գիտելիքի կայուն աղբյուրներ:

Նպատակ՝

1.Ներկայացնել բայի ձևաբանական առանձնահատկությունները :

2.Բացատրել բայի կազմությունը:

3.Տարբերել բայածանցները մյուս ածանցներից:

Վերջնարդյունք՝

1.Պարզ ձևերին ավելացնել բայածանցներ:

2.Կազմած բայերը կիրառել նախադասություններում:

3.Տարբերել պարզ բայերն ածանցավոր բայերից:

1.1 «ԽՄԲԱՎՈՐՈՒՄ» ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՆԱՐ

Խոսքի մասերը ճանաչելու , դրանք խմբավորելու , բայերն առանձնացնելու և դրանց օրինաչափություններն ընկալելու ուղիների համար կիրառում ենք «Խմբավորում» մեթոդական հնարը։ Գրատախտակին գրում ենք մի շարք բառեր և խնդրում ենք , որ աշակերտները խմբավորեն իրենց ծանոթ խոսքի մասերը ։

Նկար , այսքան , մեծ , հինգ , նա , խոսք , գեղեցիկ , լուռ , սեր , վեցերորդ, միմյանց, մտնել , երգել , լսել , ոչինչ, պարել։

Գոյական	Ածական	Թվական	Դերանուն	Բայ

Խմբավորումից հետո աշակերտներին հարցնում ենք, թե բայերը մյուս խոսքի մասերի համեմատությամբ ձևային և իմաստային տարբերություններ ունե՞ն, թե՞ ոչ ։ Աղյուակը լրացնելուց հետո առանձանցնում ենք մի քանի բառ , որոնցից կարելի է բայեր կազմել ։

Բառեր	Կազմել բայեր
նկար	նկարել
լուռ	
ոչինչ	
գեղեցիկ	

Այս գործընթացը կազմակերպելուց հետո աշակերտներին օգնում ենք բացահայտել , որ բայերը սկզբնաձևում պարտադիր ունենում են – ել , -ալ վերջավորությունները ։

1.2 ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ *ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ* ԵՂԱՆԱԿՈՎ

Ածանցավոր բայերի ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել հակադրության եղանակով ։ Այս նպատակով պարզ արմատով և բայական –ել , -ալ մասնիկներով բաղադրված ձևերին հակադրում ենք բայերին հատուկ ածանցումներով ձևեր ։ Կազմում ենք աղյուսակ , որում խմբավորում ենք պարզ և ածանցավոր բայերը ։

Ածանցավոր բայեր

Պարզ բայեր	հագնել	խաղացնել	կտրատել	հրավիրվել
խմել	զարմանալ	նստեցնել	ցատկոտել	լարվել
կարդալ	սառչել	լռեցնել	կոխկռտել	կրթվել
սիրել	պարծենալ	հագցնել		
այրել				
լռել				

Նշված բառերը ենթարկում են բառակազմական վերլուծության , որի արդյունքում տեսնում են, որ բայեր կան , որոնք ունեն մասնիկներ և դրանք այլ բառերում չեն հանդիպում ։ Ուսուցիչը նշում է, որ դրանք բայական ածանցներն են ։Այնուհետև աշակերտներին ուղղորդում է , որ պարզեն, թե դրանք իրենց իմացած

ածանցներից ինչով են տարբերվում : Աշակերտները տեսնում են , որ այս մասնիկներն ավելանում են ոչ թե բառի սկզբում կամ վերջում , այլ գրվում են բառի ներսում : Այսպիսով , ուսուցիչը սահմանում է, որ բայական ածանցները կոչվում են *միջնածանցներ*:Բոլոր գործողությունները կատարելուց հետո աշակերտներին հանձնարարվում է ածանցավոր բայերից հեռացնել ածանցները , որի արդյունքում նրանք պարզում են , որ գոյություն ունեն այնպիսի ածանցներ , որոնք հնարավոր չէ հեռացնել բայի սկզբնաձևից , իսկ մնացած ածանցների դեպքում բառերը հիմնականում չեն դադարում բայ լինելուց : Ապա ձևավորում ենք հմտություններ , որի ժամանակ աշակերտները կառչում են բառիմաստից և պարզում են , որ սոսկածանցները կատարում են *սոսկ ածանցի* դեր : Օգնում է տարբերել ն, չ ունեցող սոսկածանցավոր բայերը պարզ ձևերից :

T-աձև աղյուսակում դասավորում ենք սոսկածանցավոր և պարզ բայերը:

Պարզ	Սոսկածանցավոր
կանգնել	հագնել
կառչել	փախչել

Աշակերտներին առաջարկում ենք այս բառերից հանել բայական վերջավորությունները , դրանց փոխարեն ավելացնել –ած վերջավորությունը : Այս ամենը կատարելիս աշակերտներն իրենք են տեսնում և համոզվում , որ սոսկածանցավոր բայերի դեպքում ն, չ մասնիկները դուրս են գալիս , իսկ արմատի դեպքում պահպանվում են :

Անդրադառնում ենք բազմապատկական բայերի ուսուցման և կազմության ձևերին ։ Ուշադրությունը սևեռում ենք բազմապատկական բառի վրա ։ Փորձում ենք ցույց տալ, որ կարևոր է բառից քաղել հիմնական իմաստը ։ Այնուհետև առանձին շարքերով ցույց ենք տալիս այս բայերի ածանցավոր և արմատի կրկնությամբ ձևերը։ Գրատախտակին գրում ենք բազմապատկական ածանցները, նրանց խնդրում ենք թվել պարզ բայեր և փորձել դրանց ավելացնել գրատախտակին գրված ածանցները։Աշակերտները պարզում են, որ այս ածանցներն ունեն բառակազմական արժեք։Ածանցավոր ձևերը կազմելուց հետո, փորձում ենք սովորեցնել արմատի կրկնությամբ ձևեր կազմել։

Գրում են բառեր, ցույց ենք տալիս, որ արմատը երկու անգամ կրկնելով՝ ստանում ենք բազմապատիկ գործողություն ցույց տվող բառեր։

Օրինակ՝ փայլել – փայփլել

շողալ – շողշողալ

քաշել – քաշքշել

Այս ձևերի կազմության ժամանակ հատկանշական է աշակերտին սովորեցնել, որ արմատի կրկնությամբ ձևերը ըստ կազմության ածանցավոր չեն ։

Հանձնարարվում է գեղարվեստական գրականությունից դուրս բերել նախադասություններ, որոնցում կա բազմապատկական ածանցով բայ ։

Պատճառական բայերի կազմությունն ուսումնասիրելիս նպատակահարմար է գրել նախադասություններ, որոնցում բայը բաց է թողնված ։

Տղան …… է։

Մայրը …… տղային ։

(նստել)

Սովորողը նույն բացը ճիշտ կիրառությամբ տեղադրի բաց թողած տեղում։ Ձևերը կազմելուց հետո ցույց տա ածանցավոր բայի ածանցը ։ Կատարված աշխատանքի արդյունքում ուսուցչի օգնությամբ սովորողը կբացատրի, որ մի դեպքում

ենթական ինքն է կատարում գործողությունը, մյուս դեպքում միջամտում, որ գործողությունը կատարվի ։



Գծապատկերից օգտվելով՝ փորձում են կազմել ածանցավոր բայեր, որի ժամանակ պարզում են,որ կան բայեր, որոնք այս ածանցներով ձևեր չեն կազմում: Այս մասի համար ուսուցիչը գրատախտակին գրում է **տալ** բայը: Աշակերտներն առանձնացնում են ածանցային ձևեր չունեցող բայերը, դրանց կողքին գրում են տալ բայը: Կազմած բարդություններն ուսուցիչն անվանում է հարադրավոր, իսկ աշակերտները փորձում են հասկանալ, որ հարադրավոր բայերը կազմվում են անվանական բառից և բայից: Այնուհետև ուսուցիչն աշակերտներին բացատրում է, որ պատճառական ածանց ունեցող բայերի հետ տալ բայը կիրառելի չէ:

Հաջորդ հանձնարարությամբ աշակերտները պարզում են, թե կազմության ինչ օրինաչափություններ կան սոսկածանցավոր բայերի դեպքում: Կազմում են սահմանումներ դրանց վերաբերյալ:Տեսնում են, որ սրանց կազմության ժամանակ նույն ածանցն ունեցող բայերը կարող են կազմվել տարբեր կերպ:ՈՒսուցիչը սյունակներով կազմում է խոսակցական և գրական տարբերակների աղյուսակ և ուշադրությունը սևեռում է դրանց գրական ձևերին:

Անդրադարձ է կատարում պատճառական բայերին ձևով նման հարցնել, լցնել, եզրակացնել բայերին, ցույց է տալիս, որ սրանց դեպքում գործողությունը կատարվում է ինքնին։ Աշակերտները եզրակացնում են, որ կան բայեր, որոնք միայն արտաքուստ են նման պատճառական բայերին։ ՈՒսուցիչը նշում է , որ դրանք պատճառակերպ բայեր են։

Կրավորական ածանցն ուսուցանելիս ուսուցիչն աշակերտներին ասում է, որ թվեն –ել բայական վերջավորություն ունեցող բայեր, հիմքի և վերջավորության մեջտեղում ավելացնեն վ մասնիկը։

Բաժանում է թերթիկներ, որոնց վրա գրված են -ալ վերջավորությամբ բայեր և ասում, որ ավելացնեն վ մասնիկը և հետևեն կազմության օրինաչափությանը։ Նրանք կբացահայտեն, որ հիմքում տեղի ունեցավ մի փոփոխություն, որին նախկինում չէին հանդիպել։ ՈՒսուցիչը բացատրում է, որ այդ կերպ կազմվում է անցյալ կատարյալի հիմքը։

Օրինակ՝ կարդալ-կարդացվել

հասկանալ –հասկացվել

Բազմապատկական ածանց ունեցող բայերին վ ածանց ավելացնելիս աշակերտները պարզում են, որ այն դրվում է բայի վրա,առանց որևէ փոփոխություն կրելու, իսկ պատճառական ածանցով բայերի դեպքում տեսնում են, որ –ցն ածանցի ն բաղադրիչը փոխարինվում է *վ* ածանցով։

Այս բոլոր հետազոտությունները կատարելուց հետո գրատախտակին գրում ենք բառերի շարք՝ զգվել, երդվել, անպատվել, հաշվել, կռվել, զզվել և «Հայտնագործման» մեթոդի օգնությամբ պարզում են, որ այս բառերում եղած վ-ն որևէ շարքում իրենց չի հանդիպել։ ՈՒսուցչի օգնությամբ աշակերտները փորձում են հանել վ մասնիկը,սակայն պարզում են, որ մասնիկը հանելիս խաթարվում է բառի իմաստը։ Ուսուցիչը բացատրում է, որ այդ մասնիկը ոչ թե սեռածանց է, այլ բառակազմական ածանց կամ արմատի վերջնահնչյուն։

Հանձնարարվում է գրված նախադասության թրջել բայը դարձնել կրավորական և ըստ այդմ տեսնել նախասասության մեջ տեղի ունեցող փոփոխությունը։

Անձրևը թրջել էր ծառերին փաթաթված վազերը:

ԱՄՓՈՓՈՒՄԸ «ԿԱՐԿԱՆԴԱԿ» ՄԵԹՈԴՈՎ

Թեման կամփոփենք «Կարկանդակ» մեթոդով : Մասնակիցները կազմում են շրջան, որի կենտրոնում գրված է թեման կամ հետազոտվող հարցը : ՈՒսուցիչը շրջանը բաժանում է չորս մասի ՝ ըստ ենթատեսակների :



Մասնակիցներին հանձնարարվում է գրել յուրաքանչյուր ենթատեսակի սահմանումը, դրանց վերաբերյալ ամբողջացնող տեղեկություններ: Հանձնարարության վերջում «կարկանդակի»՝ իրենց հատկացված բաժինների վրա ներկայացնում են այն մտքերը, որոնք էլ կազմում են ընդհանուր թեման :

Աշխատանքից հետո ուսուցիչը միացնում է կարկանդակի չորս մասերը, բարձրաձայն ընթերցում խմբերի գրածները և ամփոփում ՝ասելով , որ գրվածներն իսկապես բնորոշ են բայածանցներին ։

Մեթոդը վերցվել է https://ped-kopilka.ru/blogs/nadezhda-nikolaevna-dobreckaja/opisanie-?fbclid=IwAR3mtVZ2owYJK0MCz9EukEk3lnEDqK8HkrJ0nKlspzPSFl_loGFM9Lm9yms կայքից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անդրադարձ եմ կատարել բայածանցների ուսուցմանը, քանի որ այս թեման դպրոցական դասագրքում ներկայացված է բազմաթիվ թերություններով: Դասագրքում թռուցիկ են ներկայացված տարբերակիչ ձևերը կամ բացարձակապես որևէ տեղեկություն չկա կողմնորոշման համար:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է վերանայել դասագիրքը, քանի որ այն աշակերտների համար հիմնական տեղեկությունների աղբյուր է հանդիսանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ա. Աբրահամյան , Բայը ժամանակակից հայերենում , Ե. 1962
- Յու. Ավետիսյան , Հ. Զաքարյան Հայոց լեզու , Դպրոցական մատենաշար , Ե. 2012
- Հովհ. Բարսեղյան , Փ. Մեյթիխանյան , Հայոց լեզու 7 -րդ դաս. դասագիրք Ե. 2016
- Ս. Թորգոմյան , Բայի ուսուցումը հիմնական դպրոցում Ե. 2012
- https://ped-kopilka.ru/blogs/nadezhda-nikolaevna-dobreckaja/opisanie-?fbclid=IwAR3mtVZ2owYJK0MCz9EukEk3lnEDqK8HkrJ0nKlspzPSFl_loGFM9Lm9yms